Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
նոյեմբերի 24-ի N 1808 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՆԴԻԿԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) անդամ երկրների տարածք ներքին փոխադրման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. «Սնդիկի մասին» օրենքով սահմանված հասկացությունները սույն կարգում օգտագործվում են նույն իմաստով:

3. Հայաստանի Հանրապետության տարածքից սնդիկի արտահանումը, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ երկրների տարածք ներքին փոխադրումը թույլատրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից տրամադրված սնդիկի արտահանման համաձայնության առկայության դեպքում:

4. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված համաձայնությունն ստանալու համար իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ հայտատու) լիազոր մարմին են ներկայացնում «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակում (www.trade.gov.am) հասանելի «Թույլատվական փաստաթղթեր (sw.gov.am)» համակարգի միջոցով ձևավորված էլեկտրոնային հայտը և «PDF» ձևաչափով թվայնացված հետևյալ փաստաթղթերը՝

1) սնդիկի արտահանման նպատակը ներկայացնող տեղեկանք.

2) առևտրային փաստաթղթեր (պայմանագիր, հաշիվ-ապրանքագիր).

3) բեռնափոխադրման պայմանագիր.

4) ապրանքի ծագման սերտիֆիկատ.

5) «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի կողմ (այսուհետ՝ կոնվենցիայի կողմ) հանդիսացող երկիր արտահանման դեպքում կողմ հանդիսացող երկրի լիազոր մարմնի գրավոր համաձայնությունն առ այն, որ սնդիկն օգտագործվելու է կոնվենցիայով ներմուծող կողմին թույլատրված եղանակով կամ էկոլոգիապես անվտանգ ժամանակավոր պահպանման նպատակով.

6) կոնվենցիայի կողմ չհանդիսացող երկիր արտահանման դեպքում ներմուծող երկրի գրավոր համաձայնությունը, ինչպես նաև հավաստագիր առ այն, որ ձեռնարկվել են միջոցներ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար և ներմուծվող սնդիկն օգտագործվելու է միայն այն եղանակով, որը կոնվենցիայով թույլատրված է կողմ հանդիսացող երկրներին կամ ներմուծվելու է էկոլոգիապես անվտանգ ժամանակավոր պահպանման նպատակով.

7) ավտոմոբիլային տրանսպորտով սնդիկի փոխադրման դեպքում վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում տրանսպորտի բնագավառի քաղաքականությունը մշակող մարմնի կողմից «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքով սահմանված կարգով տրամադրված վտանգավոր բեռներ փոխադրելու թույլտվությունը.

8) երկաթուղային տրանսպորտով սնդիկի փոխադրման դեպքում բեռնառաքիչ (բեռնափոխադրող) կազմակերպության ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 30-ի N 892-Ն որոշմամբ սահմանված կարգով ստորագրված և հաստատված վտանգավոր բեռի բնութագիրը.

9) օդային տրանսպորտով սնդիկի փոխադրման դեպքում տրանսպորտի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակման համար լիազորված մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշմամբ սահմանված կարգով վտանգավոր բեռների և դրանց օդային փոխադրումների սպասարկումն իրականացնող կազմակերպություններին տրված թույլտվությունը:

5. Լիազոր մարմինը սնդիկի արտահանման վերաբերյալ համաձայնությունը կամ մերժումը կամ փաստաթղթերի փաթեթի լրակազմման, հայտի ու փաստաթղթերի տվյալների ճշգրտման առաջարկը տրամադրում է սույն կարգի 4-րդ կետով սահմանված հայտը և փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակի միջոցով:

6. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերի և տվյալների թերի կամ ոչ արժանահավատ լինելու դեպքում լիազոր մարմինը, նշելով հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները, հայտատուին առաջարկում է 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը կամ ճշգրտված տվյալները:

7. Ֆիզիկական անձանց (բացառությամբ սնդիկի ներմուծմամբ և արտահանմամբ զբաղվող, սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերի) կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից սնդիկի արտահանումը, այդ թվում՝ փոխադրումը ԵԱՏՄ անդամ պետության տարածք, արգելվում է:

8. Ֆիզիկական անձանց կողմից սնդիկի արտահանման համար ներկայացված հայտը մերժվում է լիազոր մարմնի կողմից սույն կարգի 7-րդ կետով սահմանված հիմքով:

9. Սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը կամ ճշգրտված տվյալները լիազոր մարմին չներկայացնելու դեպքում հայտատուն կարող է ներկայացնել նոր հայտ՝ սույն կարգի 4-րդ կետով սահմանված դրույթներին համապատասխան:

10. Լիազոր մարմինը սույն կարգի 3-րդ կետով սահմանված համաձայնությունը հայտատուին տրամադրելուց կամ մերժելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին, Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնին, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

24.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ